ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/25756-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-298-13.06.2022-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 900 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Պ-298-13.06.2022-ՏՀ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է փոփոխություններ կատարել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածում:

Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ստուգման հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Միևնույն ժամանակ՝ օրենքի 3-րդ հոդվածի հիշյալ մասով սահմանված են վերոգրյալ կարգավորումից բացառություններ:

Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ծանուցման կարգից որպես բացառություն լրացնել նաև առողջապահության ոլորտում և աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումները:

Նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումը՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի համաձայն մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ նախատեսված է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում կառավարության հաստատմանը, որով նախատեսված է նաև ծանուցվող և չծանուցվող ստուգումների տեսակների վերանայում և հստակեցում:

Հաշվի առնելով վերոնշյալը, առաջարկում ենք հատվածական լուծումներով փոփոխություններ չնախատեսել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում:

Այդուհանդերձ, հիմք ընդունելով օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորումները, առաջարկում ենք՝

1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) 3-րդ մասի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հար-

ցերի նախարարության կողմից» բառերը փոխարինել «աշխատանքային օրենսդրության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից» բառերով:»:

Ներկայացված առաջարկությամբ պայմանավորված նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասն առաջարկում ենք հանել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 900 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Արթուր Ասոյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-298-13.06.2022-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

05.08.2022
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-298-13.06.2022-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

2) 3-րդ մասի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից առանց պայմանագրի կնքման աշխատող պահելու կամ աշխատանքային պայմանագրում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված պայմանները չներառելու դեպքերի բացահայտմանն ուղղված դեպքերում իրականացվող ստուգումների» բառերը փոխարինել «առողջապահության ոլորտում եւ աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների,» բառերով:

3) 3-րդ մասի վերջին պարբերությունում «վերահսկողություն» բառը փոխարինել «, ինչպես նաեւ առողջապահության ոլորտում եւ աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողությունը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմինը լիազորված է վերահսկողություն իրականացնել եւ օրենքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցներ կիրառել առողջապահության եւ աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման եւ անվտանգության ապահովման բնագավառներում:

Տեսչության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ իրավական հիմքերը լրացվել են 2021 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած Աշխատանքային օրենսգրքի փոփոխություններով, որով տեսչությանը իրավունք է վերապահվել ողջ ծավալով վերահսկողություն իրականացնել աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ: Վերահսկողության ձեւերից է ստուգումը, որի անցկաման կարգը ամրագրված է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքով:

Հիշյալ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ստուգման հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, պատշաճ ձեւով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Վերջինս պարտավոր է ստորագրել 1 օրինակի վրա՝

հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Գործնականում տնտեսվարողի կողմից հանձնարարագրի օրինակը չստանալը կամ չստորագրելը խոչընդոտում է ստուգումն իրականացնելը, թեեւ առեւրեւույթ կարող է չպարունակել տեսչական մարմնի աշխատանքին խոչընդոտելու հատկանիշներ: Մյուս կողմից 3-օրյա ժամկետի պահպահման պարագայում տեսչության ստուգաթերթով սահմանված ստուգման ենթակա փաստերի պարզաբանումը/բացահայտումը դառնում է անհնարին, իսկ ստուգումն՝ անարդյունավետ:

Անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն, որի արդյունքում ապահովվում է տեսչական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացումը:

2. Ընթացիկ վիճակը

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված ստուգումը սկսելուց առնվազն երեք աշխատանքային օր առաջ տնտեսավարող սուբյեկտին տեղեկացնելու մասին նորմը տեսչական վերահսկողություն իրականացնելիս հնարավորություն է ընձեռնում, որ տնտեսավարող սուբյեկտները, նախապես տեղեկանալով ստուգման մասին սահմանված նորմերին, վերացնում են վերահսկողության ենթակա թերությունները եւ պահանջվող նորմերին համապատասխանեցնում են միայն տվյալ օրը:

3. Կարգավորման նպատակը

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում կատարել փոփոխություն, որի արդյունքում կվերացվի առողջապահական եւ աշխատանքի իրավունքի ոլորտում վերահսկողություն իրականացնելիս ստուգումը սկսելուց առնվազն երեք աշխատանքային օր առաջ տնտեսավարող սուբյեկտին տեղեկացնելու մասին պահանջը:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության արդյունավետության բարձրացում: